Տեղեկանք

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետություն բնական գազի առաքման ժամանակ գների ձևավորման կարգի վերաբերյալ 2013 թվականի դեկտեմբերի 2-ի՝ Համաձայնագրին կից Արձանագրության ստորագրման նպատակահարմարության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետություն բնական գազի առաքման ժամանակ գների ձևավորման կարգի վերաբերյալ 2013 թվականի դեկտեմբերի 2-ի՝ Համաձայնագրի 5-րդ հոդվածի համաձայն կողմերի պայմանավորվածությամբ համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ՝ ձևակերպելով առանձին արձանագրությամբ:

Ձեռք բերված համաձայնությամբ բնական գազի գինը Հայաստանի Հանրապետության համար 2015 թվականի հունվարի 1-ից սկսած մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար սահմանվում է 165 ԱՄՆ դոլար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետություն բնական գազի առաքման ժամանակ գների ձևավորման կարգի վերաբերյալ 2013 թվականի դեկտեմբերի 2-ի՝ Համաձայնագրով սահմանված 189 ԱՄՆ դոլարի փոխարեն:

Արձանագրության ստորագրումը հնարավորություն է ընձեռում իրավահավասարության փոխշահավետության հիման վրա երկու երկրների միջև շարունակել զարգացնել տնտեսական հարաբերություններ:

Սույն Արձանագրության ստորագրումը կնպաստի երկու երկրների միջև փոխշահավետ համագործակցության, տնտեսական կապերի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծման, գործարար ակտիվության բարձրացման շարունակմանը:

Առաջնորդվելով «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի դրույթներով՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը նպատակահարմար է գտնում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետություն բնական գազի առաքման ժամանակ գների ձևավորման կարգի վերաբերյալ 2013 թվականի դեկտեմբերի 2-ի՝ Համաձայնագրին կից Արձանագրության ստորագրումը Հայաստանի Հանրապետության կողմից:

ՀՀ էներգետիկայի և բնական
պաշարների նախարար Ե. Զախարյան

Տեղեկանք

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի և հետագա գործունեության պայմանների մասին 2013 թվականի դեկտեմբերի 2-ի՝ Համաձայնագրին կից Արձանագրության ստորագրման նպատակահարմարության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի և հետագա գործունեության պայմանների մասին 2013 թվականի դեկտեմբերի 2-ի՝ Համաձայնագրի 11-րդ հոդվածի համաձայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ՝ ձևակերպելով համապատասխան արձանագրությամբ, որը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մաս:

Համաձայնագրին կից Արձանագրությունով նախատեսվում է 2015թ. առաջացող «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության լրացուցիչ ամբողջ հասույթը թողնել ընկերությանը՝ ՀՀ դրամի ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկումից առաջացած վնասների փակման և «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության կողմից «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության ակտիվներում ներդրումների հետ գնման ապահովման նպատակով:

Հարկ է նշել, որ հակառակ դեպքում այդ վնասների փոխհատուցումը հնարավոր կլիներ միայն բնական գազի սակագնի բարձրացման միջոցով, ինչը իր հերթին կանդրադառնար նաև էլեկտրաէներգիայի սակագնի վրա:

Հայկական կողմը պարտավորվում է մինչև Իրան-Հայաստան էլեկտրահաղորդման գծի շահագործման հանձնումը (ոչ ուշ քան 2018 թվականը) ապահովել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից արտադրված ոչ պակաս քան տարեկան 1 մլրդ կվտժ էլեկտրաէներգիայի իրացումը, այդ թվում ոչ պակաս քան 500 մլն կվտժ էլեկտրաէներգիա ներքին շուկայում, պայմանով, որ հաստատված

սակագինը կլինի Հրազդանի ՋԷԿ-ի սակագնից ցածր և 500 մլն կվտժ փոխհոսք երրորդ երկրներ:

Կողմերը պարտավորվում են ոչ ուշ մինչև 2015 թվականի նոյեմբերի 1-ը մշակել և հաստատել դրամական հոսքերի հաշվարկի մոդելները՝ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության հիմնական գործունեությունից՝ գազամատակարարման համակարգում և ընկերության հիմնական գործունեությունից՝ էլեկտրամատակարարման համակարգում:

Արձանագրության ստորագրումը հնարավորություն է ընձեռում իրավահավասարության փոխշահավետության հիման վրա երկու երկրների միջև շարունակել զարգացնել տնտեսական հարաբերություններ:

Սույն Արձանագրության ստորագրումը կնպաստի երկու երկրների միջև փոխշահավետ համագործակցության, տնտեսական կապերի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծման, գործարար ակտիվության բարձրացման շարունակմանը:

Առաջնորդվելով «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի դրույթներով՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը նպատակահարմար է գտնում Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի և հետագա գործունեության պայմանների մասին 2013 թվականի դեկտեմբերի 2-ի՝ Համաձայնագրին կից Արձանագրության ստորագրումը Հայաստանի Հանրապետության կողմից:

ՀՀ էներգետիկայի և բնական
պաշարների նախարար Ե. Զախարյան